ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 4 դեկտեմբերի 2018թ. ժամը 12:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ Կարեն Աբրեյան

Անդամներ Արսեն Մուրադյան

Ալինա Կարապետյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար Բաբկեն Աբրեյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/9 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/9 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք պատուհանների և դռան նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 864 836 ՀՀ դրամ, ինչպես նաև չափաբաժիններից յուրաքանչյուրի նախահաշվային գինը, որը «պատուհաններ» չափաբաժնի համար կազմում էր 745 178 ՀՀ դրամ, իսկ «դուռ» չափաբաժնի համար՝ 119 658 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց հանձնաժողովի անդամներին, որ պատվիրատուի կողմից հրավեր ստացած մասնակիցը՝ Ա/Ձ Գնել Մկրտիչի Լամբարյանը (հասցեն՝ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 274/2, էլ՝ փոստ՝ m.lambaryan@yahoo.com) ներկայացրել է հրավերով պահանջվող գնային առաջարկ: Այնուհետև քարտուղարը մասնակցի ներկայացրած գնային առաջարկը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը, ծանոթանալով գնային առաջարկին, հայտարարեցեց, որ մասնակիցն առաջարկում է պայմանագիրը կատարել 731 710 ՀՀ դրամ ընդհանուր գնով, այդ թվում՝ 1-ին չափաբաժնի մասով՝ 624 988, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ 106 722 ՀՀ դրամ գներով:

Հանձնաժողովը գնահատեց մասնակցի ներայացրած գնային առաջարկի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանություններ չարձանագրվեցին:

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Գնել Մկրտիչի Լամբարյանին՝ որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովը նաև արձանագրեց, որ.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ուղարկելու անհրաժեշտություն չկա:

2. ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով որակավորման չափանիշներ սահմանված չեն, հետևաբար առաջին տեղ զբաղեցրած մասնակցից այդ չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/9 ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և Ա/Ձ Գնել Մկրտիչի Լամբարյանին ճանաչել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/9 ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից Ա/Ձ Գնել Մկրտիչի Լամբարյանի հետ կնքել պատուհանների և դռան մատակարարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ _____ Կարեն Աբրեյան

Հանձնաժողովի անդամներ _____ Արսեն Մուրադյան

_____ Ալինա Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Բաբկեն Աբրեյան